

««Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն»



««Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն»

Շիրակի մարզի տնտեսական վիճակի վերլուծություն

Գրիգոր Ավետիսյան

Գյումրի 2014

Բովանդակություն

Շիրակի մարզի ընդհանուր նկարագիրը.....	2
Շիրակի մարզի գյուղատնտեսության ընդհանուր նկարագիրը	5
Շիրակի մարզի գյուղական համայնքները ըստ մարզի տարածաշրջանների.....	5
Գյուղմթերքի իրացման գործընթացը, գյուղատնտեսությունում առկա խնդիրները և գյուղացիներից շատերի առաջարկած բարեփոխումները այդ ուղղությամբ.....	8
Աշխատանքային միզրացիա	12
Արդյունաբերություն և Շիրակի մարզի տնտեսության այլ ոլորտներ.....	12
Հավելվածներ	18

Շիրակի մարզի ընդհանուր նկարագիրը

Տարածքը	2680 քառ. կմ ¹	
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	9%	
Քաղաքային համայնքներ	3	
Գյուղական համայնքներ	116	
Բնակչության թվաքանակը 2014թ-ի հունվարի 1-ի դրությամբ	248,3 հազ. մարդ(նախորդ ժամանակաշրջանի համեմատ նվազել է 1,2%-ով ²), այդ թվում	Քաղաքային 144,5 հազ. մարդ կամ 58,2% (նախորդ ժամանակաշրջանի համեմատ նվազել է 1,23%-ով)
		Գյուղական 103,8 հազ. մարդ կամ 41,8% (նախորդ ժամանակաշրջանի համեմատ նվազել է 1,14%-ով)
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2013թ	8,2%	
Գյուղատնտեսական նշանակության հողեր՝	214546 հա	
այդ թվում վարելահողեր	78700,8 հա	

ՀՀ Շիրակի մարզը գտնվում է հանրապետության հյուսիս-արևմուտքում: Արևմուտքից սահմանակից է Թուրքիային, հյուսիսից՝ Վրաստանին, արևելքից՝ ՀՀ Լոռու մարզին և հարավից՝ ՀՀ Արագածոտնի մարզին:

Մարզկենտրոնն է Գյումրի քաղաքը, (2013թ. տարեվերջին՝ 119.9 հազ. բնակիչ) որը գտնվում է Երևանից 118 կմ հեռավորության վրա: Բարձրությունը ծովի մակերևույթից շուրջ 1550 մ է: Քաղաքը գտնվում է Ախուրյան գետի ձախ ափին: Այն բնակչության թվաքանակով և իր նշանակությամբ համարվում է Հայաստանի Հանրապետության երկրորդ քաղաքը:

ՀՀ Շիրակի մարզը, լինելով ծովի մակերևույթից մոտ 1500-2000 մ բարձրության վրա (մարզի 52 գյուղեր գտնվում են ծովի մակերևույթից մոտ 1 500-1700մ, իսկ 55-ը՝ 2000մ բարձրության վրա), հանդիսանում է Հայաստանի ամենացրտաշունչ տարածաշրջանը:

Մարզի տարածքով են անցնում Հայաստանը Վրաստանին կապող գլխավոր երկաթգիծը և ավտոմոբիլային խճուղին: Այստեղ իրար են միանում Հայաստանի և Թուրքիայի երկաթուղային և ավտոճանապարհային ցանցերը (Երևան-Գյումրի-Թբիլիսի, Թբիլիսի-Գյումրի-Կարս երկաթուղիները, Երևան-Գյումրի-Բավրա-Ախալքալաք և Գյումրի-Կարս ավտոխճուղիները): Աշխարհագրական դիրքի


¹ http://armstat.am/file/article/marz_14_31.pdf

² http://armstat.am/file/article/marz_14_8.pdf

«Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն»

առանձնահատկություններից է նաև այն, որ Վրաստանի տարածքը՝ ՀՀ Շիրակի մարզին հարող պետական սահմանի ամբողջ երկայնքով հիմնականում հայաբնակ է: Մարզում գործում է «Շիրակ» միջազգային օդանավակայանը, որն ապահովում է օդային կապը ԱՊՀ երկրների հետ և հնարավորություն ունի ընդունել ցանկացած տեսակի ինքնաթիռ:

Թուրքիայի հետ սահմանային Ախուրյան գետի վրա գործում է Ախուրյանի ջրամբարը, որն իր 526 մլն. մ³ ծավալով խոշորագույնն է հանրապետությունում: Շիրակի մարզում առկա են հետևյալ արհեստական ջրամբարները՝ Ախուրյանի, Սպանդարյանի, Կառնուտի, Մանթաշի, Արփիի, Վարդաքարի, Սառնաղբյուրի: 2013թ-ի դրությամբ Շիրակի մարզին բաժին է ընկնում ՀՀ-ի ամբողջ արդյունաբերական արտադրանքի 3,4%-ը³:




2013թ-ի դրությամբ ՀՀ-ի ամբողջ արտահանումների 0,3%-ը բաժին է ընկնում Շիրակի մարզին, իսկ ներմուծումների՝ 1,3%-ը⁴:

2013թ-ի դրությամբ Շիրակի մարզի գյուղատնտեսության տեսակարար կշիռը ՀՀ ցուցանիշի մեջ կազմել է 11,6%⁵:


³ http://armstat.am/file/article/marz_14_10.pdf

⁴ http://armstat.am/file/article/marz_14_18.pdf

⁵ http://armstat.am/file/article/marz_14_11.pdf



Վերևի գրաֆիկում պատկերված է կերային մշակաբույսերի՝ մեծամասամբ կորնգանի և առվույտի ցանքատարածությունները, որոնք քիչ չեն Շիրակի մարզում:



Շիրակի մարզի գյուղատնտեսության ընդհանուր նկարագիրը

Գյուղատնտեսական հողատեսքերը կազմում են մարզի ընդհանուր 268000 հա տարածքի 80,05%(214548հա):

Գյուղատնտեսական հողատեսքերի կառուցվածք⁶

	Գյուղ. նշանակության հողեր	այդ թվում				
		Վարելահողեր	բազմամյա տնկարկներ	խոտհարքներ	Արոտավայրեր	այլ հողեր
ՀՀ Շիրակի մարզ ընդամենը	214548	78940,9	44,5	10498,8	114348,2	10715,5

Մարզի գյուղատնտեսական հողատեսքերի մեջ մեծ կշիռ ունեն արոտավայրերը՝ 53,29% և վարելահողերը՝ 36.79%: Զրոփի վարելահողերը կազմում են 20249,6 հա: Շիրակի մարզում մշակվող հիմնական մշակաբույսերի մոտավոր տեսակարար կշիռներն են՝

1. հացահատիկ 69,3%
2. կարտոֆիլ 7,2%
3. բանջարեղեն 2,6%
4. կերային մշակաբույսեր 20,9%:

2013թ-ի հունվարի 1-ի դրությամբ անասնապահության մեջ Շիրակի մարզի տեսակարար կշիռը ամբողջ ՀՀ-ում՝

	խոշոր եղջերավոր անասուններ	այդ թվում կովեր	խոզեր	ոչխարներ և այծեր
մարզի տեսակարար կշիռը	16%	16,5%	10,8%	12,8%

Շիրակի մարզի գյուղական համայնքները ըստ մարզի տարածաշրջանների

Շիրակի մարզի գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքում առանձնանում են՝ հացահատիկի մշակումը (ցորեն, գարի, այլ), կարտոֆիլագործությունը, կերային մշակաբույսերի մշակությունը (կորնգան, առվույտ, այլ), բանջարաբուծությունը (կաղամբ, ծաղկակաղամբ, գազար, սեղանի ճակնդեղ, այլ), խոշոր եղջերավոր անասնապահությունը, ոչխարաբուծությունը, խոզաբուծությունը, մեղվապահությունը:

⁶ <http://shirak.gov.am/files/docs/5232.pdf> էջ 114

«Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն»

Նախկինում մարզում աճեցվել են շաքարի ճակնդեղ՝ Սպիտակի շաքարի գործարանի համար, իսկ ներկայումս շաքարի ճակնդեղ չեն աճեցնում: Հնում մարզում աճեցրել են նաև ծխախոտ և կտավատ, վերջինիս ցանքսերը մարզում ներկայումս շատ քիչ են, ինչը պայմանավորված է գյուղտեխնիկայի անսարքին և հնամաշ լինելով:

Շիրակի մարզը իր մեջ ներառում է Ախուրյանի, Ամասիայի, Անիի, Աշոցքի և Արթիկի տարածաշրջանները:

1. Ախուրյանի տարածաշրջանը իր մեջ ներառում է Ախուրյան, Ագատան, Ախուրիկ, Առափի, Արևիկ, Գետք, Կամո, Մայիսյան, Կարմրաքար, Սարիար, Կառնուտ, Բասեն, Կապս, Շիրակ, Այգաբաց, Կրաշեն, Ոսկեհասկ, Հայկավան, Ջաջուռ, Բայանդուր, Հացիկ, Ջաջուռավան, Բենիամին, Հովիտ, Վահրամաբերդ, Հովունի, Ջրառատ, Երազգավորս, Ղարիբջանյան, Փոքրաշեն, Լեռնուտ, Մարմաշեն, Քեթի գյուղերը:

Ախուրյանի տարածաշրջանի ընդհանուր պատկերը՝

- վարելահող - 23269,86 հա
- խոտհարք - 809,09 հա
- արոտ - 18628,02 հա:

Ախուրյանի տարածաշրջանում է տեղաբաշխված մարզի ոռոգվող հողերի մեծ մասը, սակայն, օրինակ Ջրառատ համայնքում ընդհանրապես ոռոգելի հողեր չկան:

Ախուրյանի տարածաշրջանը համարվում է Շիրակի սևահողային շրջանը: Այստեղ զարգացած է բազմաձյուղ գյուղատնտեսությունը՝ հացահատիկային մշակաբույսեր (ցորեն, գարի և այլն), կարտոֆիլ, կերային մշակաբույսեր (առվույտ, կորնգան), բանջարեղեն (կաղամբ, ծաղկակաղամբ, սեղանի ճակնդեղ, գազար):

Այս տարածաշրջանում գյուղացիները զբաղվում են նաև խոշոր եղջերավոր և մանր եղջերավոր անասնապահությամբ և խոզաբուծությամբ, սակայն անասնապահությունը մարզում հատկապես զարգացած է Ամասիայի և Աշոցքի տարածաշրջանների գյուղերում, որտեղ անասնապահությունը, կարելի է ասել, գյուղատնտեսությամբ զբաղվողների միակ կամ հիմնական եկամտի աղբյուրն է:

Ախուրյանի տարածաշրջանի Ախուրյան համայնքը հանդիսանում է բնակչության թվով ՀՀ-ի ամենամեծ համայնքը, իր մեջ ներառում է 3 բնակավայր՝ Ախուրյան գյուղը, նախկին շրջկենտրոնը և Նոր Ախուրյանը:

Ախուրյանի տարածաշրջանում կարտոֆիլի մշակությամբ զբաղվող՝ կարտոֆիլի շատ ցանքսեր ունեցող գյուղերն են՝ Ագատան, Ախուրյան, Հացիկ, Մայիսյան, Կառնուտ, Արևիկ համայնքները: Ղարիբջանյանը հայտնի է կաղամբի, ծաղկակաղամբի մշակությամբ, իսկ ընդհանրապես այս բոլոր համայնքներում էլ շատ են նաև հացահատիկի ցանքսերը:

2. Արթիկի տարածաշրջանը իր մեջ ներառում է Անուշավան, Արևատ, Մեղրաշեն, Նահապետավան, Գեղանիստ, Նոր-Կյանք, Գետափ, Պենգաշեն, Լեռնակերտ, Սարալանջ, Լուսակերտ, Սարատակ, Սպանդարյան, Հայկասար, Հայրենյաց, Վարդաքար, Հառիձ, Տուֆաշեն, Հոռոմ, Փանիկ, Հովտաշեն, Փոքր Մանթաշ, Մեծ Մանթաշ գյուղերը:

Արթիկի տարածաշրջանի ընդհանուր պատկերը՝

- վարելահող - 14315,92 հա
- խոտհարք - 250,12 հա
- արոտ - 22934,01 հա:

«Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն»

Արթիկի տարածաշրջանում մշակվող հողերի առյուծի բաժինը կազմում են հացահատիկային մշակաբույսերը (ցորեն, գարի) և կերային մշակաբույսերից կորնզանը: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ տարածաշրջանում գյուղատնտեսական հողերը հիմնականում ոռոգվող չեն: Անջրդի հողերի պատճառով այդ տարածաշրջանի շատ գյուղերի գյուղացիներ չեն կարողանում կատարել ցանքաշրջանառություն (մի տարի մի տեսակի մշակաբույս ցանելուց հետո, հաջորդ տարի այլ տեսակի մշակաբույսով չեն կարող փոխարինել, օր` ցորենը կարտոֆիլով, ինչը ազդում է հողերի բերքատվության վրա): Այս տարածաշրջանի շատ գյուղացիներ անում էին հետևյալը: Առաջին տարին ցանում են ցորեն, հաջորդ տարի գարի, իսկ մյուսին` ցանքս ընդհանրապես չեն կատարում, որպեսզի հողը հանգստանա ու այդպես շարունակ:

Այս տարածաշրջանում կարտոֆիլի և բանջարեղենի ցանքերը համեմատաբար քիչ են, նորից կապված անջրդի հողերի գերակշռման հետ և այդ պատճառով այդ մշակաբույսերը հիմնականում բավարարում են սեփական սպառման կարիքները:

Այս տարածաշրջանում, համեմատած Ախուրյանի տարածաշրջանի, ավելի զարգացած է անասնապահությունը:

Արևշատ համայնքում շատ են գազարի, սեղանի ճակնդեղի ցանքատարածությունները: Փանիկ համայնքում կա 3 հա այգի(որից 2,5 հա-ը խնձոր է, իսկ 0,5 հա-ը` տանձ):

Այս տարածաշրջանի համայնքներում ամենաշատ ցանվող մշակաբույսը հացահատիկն է` ցորեն, գարի, ինչը հիմնականում պայմանավորված է բերրի, սակայն անջրդի հողերով: Շատ են նաև կերային մշակաբույսերի ցանքերը:

Այս տարածաշրջանին բնորոշ հիմնական խնդիրն է ոռոգվող հողերի սակավությունը, հողերը ոռոգող ջրամբարների չվերականգնումը` Արթիկի ջրամբար, իսկ առկա ջրամբարները չեն բավարարում ոռոգելի ջրի նկատմամբ եղած պահանջները` Մանթաշի, Վարդաքարի ջրամբար:

3.Անիի տարածաշրջանը իր մեջ ներառում է Ադին, Անի կայարան, Անիպեմզա, Հայկաձոր, Չիթհանքով, Չորակապ, Բագրավան, Շիրակավան, Գուսանագյուղ, Ջրափի, Իսահակյան, Սառնաղբյուր, Լանջիկ, Սարակապ, Լուսաղբյուր, Քարաբերդ գյուղերը:

Անիի տարածաշրջանի ընդհանուր պատկերը`

- վարելահող - 15024,37 հա
- խոտհարք - 94,77 հա
- արոտ - 22712,58 հա:

Անիի տարածաշրջանում նույնպես անջրդի հողերը գերակշռում են և կազմում են գյուղատնտեսական նշանակության հողերի հիմնական մասը և այդ պայմաններում Անիի տարածաշրջանի գյուղերում հիմնականում մշակվում է հացահատիկային մշակաբույսեր, իսկ կերային մշակաբույսերից` կորնզան:

Համեմատաբար զարգացած է անասնապահությունը, մասնավորապես խոշոր եղջերավոր անասնապահությունը, ոչխարաբուծությունը, որոշ գյուղերում քիչ չեն նաև պահվող մեղվաընտանիքների քանակը:

Սառնաղբյուր համայնքում կա համանուն ջրամբար, սակայն պոմպը, որը ջուրը պետք է մղի առուններ 1970թ-ի է և հզորությունը չի բավարարում: Գուսանագյուղ համայնքում ոռոգելի է ընդամենը 3 հա-ը: Լանջիկում նույնպես ոռոգելի հողեր գրեթե չկան:

«Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն»

Այս տարածաշրջանի գյուղերում գերակշռում են հացահատիկային մշակաբույսերը և կերային մշակաբույսերը:

4.Աշոցքի տարածաշրջանը իր մեջ ներառում է Աշոցք, Ցողամարգ, Արփենի, Գոգիովիտ, Բաշգյուղ, Թորոսգյուղ, Թավշուտ, Լեռնագյուղ, Ղազանչի, Փոքր Սարիար, Մեծ Սեպասար, Կաքավասար, Փոքր Սեպասար, Սարապատ, Սարագյուղ, Չորաշեն, Կրասար, Սիգավետ, Ջուլգաղբյուր, Բավրա, Կարմրավան, Վարդաղբյուր, Հարթաշեն, Մուսայեյան, Սալուտ գյուղերը:

Վարելահողերը կազմում են 12830,61 հա: Աշոցքի տարածաշրջանը գտնվում է մարզի հյուսիս-արևելքում, համարվում է ինչպես մարզի, այնպես էլ հանրապետության ամենացուրտ տարածքը: Այս տարածաշրջանում զարգացած է անասնապահության բոլոր տեսակները, այստեղ կան լավ խոտհարքներ և արոտավայրեր: Այս տարածաշրջանում համեմատական կարգով բարձր են կովերի կաթնատվությունը և կաթի յուղայնությունը:

Տարածաշրջանի կենտրոն համարվող Աշոցքի համայնքով է անցնում Գյումրի-Նինոծմինդա(Վրաստան) միջպետական նշանակության ավտոճանապարհը: Համայնքը ուղիղ գծով հեռու է Վրաստանի սահմանից 12կմ-ով, իսկ Թուրքիայի սահմանից` 22կմ-ով, Գյումրիից գտնվում է 36կմ հեռավորության վրա:

Այս գյուղերում համեմատաբար զարգացած է անասնապահության բոլոր տեսակները, ինչը որոշ դեպքերում հանդիսանում է գյուղացիների միակ և հիմնական զբաղմունքը:

5.Ամասիայի տարածաշրջանը իր մեջ ներառում է Ամասիա, Արեգնադեմ, Ալվար, Աղվորիկ, Արդենիս, Ջարիշատ, Չորակերտ, Ծաղկուտ, Հողմիկ, Հովտուն, Բանդիվան, Մեղրաշատ, Բերդաշեն, Շաղիկ, Գառնառիձ, Ողջի, Բյուրակն, Ջրածոր, Գտաշեն գյուղերը:

Վարելահողերը կազմում են 13171,63 հա: Ամասիայի տարածաշրջանը գտնվում է մարզի հյուսիս-արևմուտքում, սահմանամերձ է Թուրքիային և Վրաստանին, բնակլիմայական պայմանները թույլ են տալիս բնակչությանը զբաղվել հիմնականում անասնապահությամբ: Այստեղ է գտնվում նաև Արփի լիճը, որտեղից սկիզբ է առնում Ախուրյան գետը:

Այս գյուղերի մեծամասնությունում զարգացած է անասնապահության բոլոր տեսակները, ինչը որոշ դեպքերում հանդիսանում է գյուղացիների միակ և հիմնական զբաղմունքը:

Բյուրակն համայնքում մեծ է հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունների կշիռը ընդհանուրի մեջ, իսկ անասնազլխաքանակի մեջ շատ են ոչխարների և խոշոր եղջերավոր անասունների անասնազլխաքանակները:

Գյուղմթերքի իրացման գործընթացը, գյուղատնտեսությունում առկա խնդիրները և գյուղացիներից շատերի առաջարկած բարեփոխումները այդ ուղղությամբ

Հիմնական գյուղմթերքը` ցորենը, գյուղացիները վաճառում են մարզի ալրաղացներին, ցորենի ընդունման կետերին, իսկ որոշ մասը օգտագործում են սեփական կարիքների համար` այլուրի տեսքով, ինչպես նաև հաճախ շատ քիչ մաս պահում են հաջորդ տարվա համար սերմնացու:

«Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն»

Գարին ամբողջությամբ օգտագործում են որպես անասնակեր, շատ քիչ մաս էլ պահում են հաջորդ տարվա համար սերմնացու:

Կարտոֆիլը միջին գյուղացիական տնտեսությունները վաճառում են իրենց գյուղեր եկած առևտրականներին, որն էլ վերջում վաճառվում է ներքին շուկայում, իսկ ֆերմերները հաճախ իրենց կարտոֆիլի բերքը վաճառում են վրացիներին կամ արտահանմամբ զբաղվող միջնորդ կազմակերպություններին, օր` Spayka: Կարտոֆիլի որոշ մաս ծառայում է հաջորդ տարվա համար սերմնացու և սեփական կարիքների համար:

Այն համայնքներում, որտեղ գյուղացիները շատ են ցանում բանջարանոցային մշակաբույսեր` կաղամբ, ծաղկակաղամբ, գազար, սեղանի ձակնդեղ և այլն բերքը վաճառում են առևտրականներին, այլ ապրանքների հետ են փոխանակում (բարտեր) և պահում են սեփական կարիքների համար:

Կերային մշակաբույսերը` կորնզան, առվույտ և այլն ծառայում են որպես սեփական անասուններին անասնակեր և երբեմն ավելանալու կամ պակասի դեպքում գյուղացիները մեկը մյուսից գնում կամ վաճառում են այն: Այս տարի նախորդ տարվա նման 1 հակ խոտի գինը տատանվում է 1500 դրամի շրջանակներում, ինչը բարձր գին է և պայմանավորված է խոտի սակավությամբ:

Կաթը վաճառում են վերամշակողներին, կամ միջնորդ անհատների, իսկ որոշ մասն էլ օգտագործում են սեփական կարիքների համար` յուղ, պանիր ստանալու նպատակով:

Միսը վաճառում են մսավաճառներին, իսկ որոշ դեպքերում անասունին մորթում են իրենք և վաճառքը կազմակերպում են անմիջապես գյուղի ներսում` համագյուղացիների շրջանակում: Գյուղացիները դժգոհում են մսի գներից, այն գներից, որով իրենք են վաճառում մսավաճառներին: Ցանկանում են, որ մթերման կետեր, կամ գործարան լինի մարզում, ուր կարող են բերել սեփական անասունին և վաճառել, այսինքն այլընտրանք լինի գյուղացու համար մսավաճառներից բացի, ովքեր իրենք են գին թելադրում: Բացի այս ամենից մարզը ունի պոտենցիալ հնարավորություն ունենալու մսամթերք վերամշակող, պահածոների գործարան, քանի որ մարզի տեսակարար կշիռը ՀՀ-ում անասնապահության մեջ բավականին մեծ է:

Չկան կաշվի, բրդի, մորթու վերամշակմամբ զբաղվող ընկերություններ և գյուղացին այդ ամենը չի կարողանում իրացնել:

Ներկայումս գյուղտեխնիկայի համար վճարվող գումարները կազմում են ինքնարժեքի զգալի մասը, դրան ավելանում են նոր սերմերի, պարարտանյութի, ոռոգման ջրի, հողի վարձի, թունաքիմիկատների արժեքը և արդյունքում վաճառքից ստացված եկամուտը չի բավարարում գյուղացիներին իրենց ընտանիքի ամբողջ տարվա հոգսերը հոգալու համար և շատ շատերը Շիրակի մարզից գնում են ՌԴ արատագնա աշխատանքի:

Մարզի համայնքներում օգտագործվող գյուղտեխնիկան հին է և անսարք, ինչի արդյունքում, ըստ տարբեր գյուղացիների գնահատականի, օրինակ հացահատիկի բերքի 20%-ի կորուստ է լինում` բերքը մնում է արտում:

Մարզի բազմաթիվ գյուղերում կա ոռոգման ջրի բացակայության խնդիր:

Շատ գյուղացիներ չեն կարողանում օգտվել պետության կողմից սուբսիդավորված պարարտանյութից և դիզ. վառելիքից, քանի որ դրանց տրամադրման ժամանակ գյուղացիները գումար չեն ունենում և այն հետագայում գնում են շուկայից`

«Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն»

շուկայական ավելի բարձր գներով: Բազում գյուղացիներ այս մասով ցանկանում են, որ դրանք տրամադրվեն տարածամկետ վճարման կարգով՝ բերքահավաքին վճարելու պայմանով:

Շիրակի մարզի շատ գյուղերում չկան տեղադրված հակակարկտային կայաններ, կան հնամաշ ոռոգման ցանց ունեցող գյուղեր, ինչպես նաև շատ են անբարեկարգ ճանապարհներ ունեցող գյուղերի թիվը, վերջինս շատ է խոչընդոտում գյուղմթերքի ստացման և իրացման պրոցեսի կաղնակերպմանը:

Անասնապահության մասով անասուններից ստացվող գյուղմթերքի շուկայական գները թույլ չեն տալիս անասնապահության զարգացմանը, արոտավայրերում անհրաժեշտ է ջրարբիացում, որպեսզի ջուր խմելու համար անասունը արոտից գյուղ չհասնի և այդ ընթացքում քաշ չկորցնի, ինչպես նաև անհրաժեշտ է արոտների վիճակի բարելավում:

Բազում գյուղացիներ մի շարք խնդիրների լուծման ուղի տեսնում են գյուղատնտեսության պլանավորումը կամ պետական վերահսկողությունը գյուղմթերքի գների նկատմամբ: Գյուղացիները ցանկանում են յուրաքնչյուր տարի՝ նախքան գյուղատնտեսական աշխատանքները սկսվելը, տեղեկանալ, թե ինչ ցանեն և ինչքան, որպեսզի կարողանան իրացումը լիարժեք կազմակերպել և համոզված լինեն, որ պետության կողմից նախապես հայտարարված գներից գյուղմթերքը շուկայում ավելի էժան չի արժենա:

2013թ-ին գյուղատնտեսության համար գրթե բոլոր մշակաբույսերի բերքատվությունը միջինից բարձր է եղել, սակայն այս տարի՝ 2014թ-ին, կարտոֆիլի բերքատվության 30-40% անկում է եղել: Հիմնական պատճառը եղանակային անբարենպաստ պայմաններն էին՝ չորային եղանակ, ջերմաստիճանի բարձր ցուցանիշ՝ 30 աստիճան ցելսիուս, որը երկար ժամանակ պահպանվել է, բացի դրանից սակավաջուր տարի էր, ոռոգումը եղել է ընդհատումներով և քիչ, ինչպես նաև բերքը վնասվել է կարկտահարությունից ու ցրտահարությունից: Կարկտահարված տարածքների վերականգնման համար լրացուցիչ ծախսեր են իրականացվել (լրացուցիչ պարարտացում, փխրեցում, ոռոգում և այլն), այդ միջոցառումների շնորհիվ վնասը հասցվել է 20-30%-ի: Մեծ մասի մոտ բերքի վրա իր ազդեցությունն է թողել ցրտահարությունը, ցրտահարվել է կարտոֆիլի ցանկատարածությունների կեսը, ու դրա վերականգնման համար լրացուցիչ պարարտացում ու փխրեցում է կատարվել՝ վնասը հասցնելով նվազագույնի: Ցորենի մասով բերքատվությունը անցած տարվա համեմատ 30%-ով քիչ էր, սակայն այդ եղածն էլ կարկտահարվել է, վնասը կազմում է մինչև 50%: Բազուկի մասով բոլորի մոտ էլ բերքը միջինի սահմաններում է, դժգոհ չեն, չնայած որ եթե ցրտահարություն ու կարկտահարություն չլիներ ավելի լավ կլիներ: Գյուղատնտեսության մեջ Շիրակի մարզում մի քանի ֆերմերներ ցանքատարածությունները մշակել են նոր տեխնիկայով, սա արտադրողականության բարձրացման քայլ է համարվում: Կարտոֆիլի սորտավորման գործընթացը սկսել են մեքենայացնել, ու դրանով աշխատավարձի ու ժամանակի ծախսը քջանում է, օրինակ 20տոննա կարտոֆիլը այդ տեխնիկայով ու 6 աշխատողով հնարավոր է մի օրվա կատարել, մինչդեռ առանց այդ տեխնիկայի նման քանակությունը մի օրվա հնարավոր կլիներ 30-40 աշխատողով կատարել, սա ֆինանսական մեծ տնտեսում է և արտադրողականության բարելավման ուղի:

«Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն»

Կարտոֆիլի այս տարվա գները սպասելի էին, քանի որ կարտոֆիլը 2014թ-ին քիչ էր ցանվել 2013թ-ի համեմատ(սակայն պաշտոնական տվյալներով հայտարարվել է, որ մարզում շատ է ցանվել), դրանից բացի բերքատվության նման ցածր ցուցանիշը նույնպես էական ազդեցություն ունեցավ կարտոֆիլի գնի վրա, դրան գումարվեց նաև մեծածավալ արտահանումը: Ներկայումս միայն Վրաստան է արտահանվում, կարտոֆիլից բացի Վրաստան է արտահանվում նաև բազուկ ու գազար: Վրաստանից բացի կարտոֆիլ է արտահանվելու ՌԴ, բայց ՌԴ արստահանումը սպասվում է հունվարից հետո:

Ֆերմերները մեծ հույսեր ունեն Մաքսային Միության հետ կապված, ասում են իրացման շուկան կընդլայնվի:

Մյուս տարվա համար կարտոֆիլի մասով կանխատեսվում է այս տարվա ցանքատարածությունների նույն քանակությունը, սա մոտավոր ֆերմերների նախապատրաստած վարելահողերի քանակից ելնելով են ասում: Ցորենի մասով ասում են, այս տարի աշնանացան ցորեն շատ է ցանվել անցած տարվա հետ համեմատ, դա կապում են տարածամեկտ վճարման աշնանը վճարելու պայմանով տրամադրված սերմացու ցորենի հետ:

2014թ-ին Շիրակի մարզի թվով 39 համայնքում տեղացած ուժգին կարկուտը, իսկ որոշ համայնքներում նույնիսկ մեկից ավելի անգամ տեղացած կարկուտը զգալի ազդել են տվյալ համայնքներում մշակաբույսերի բերքատվության վրա, կան համայնքներ, որ վնասը շատ մեծ է եղել և գյուղացին առհասարակ բերք չի ունեցել հավաքելու:

Այդ համայնքներում գյուղացիների շրջանակում կատարված հարցումներից պարզվել է, որ պետական աջակցությունը պարարտանյութի տեսքով չի եղել, կամ ուշացած է եղել և քիչ քանակով, ինչի պատճառով ով գումար չի ունեցել շուկայից պարարտանյութ գնելու չի կարողացել կարկուտի հասցրած վնասը գոնե ինչ-որ չափով մեղմել: Գյուղացիները նշում էին, որ դեռևս միակ օգնությունը եղել է այն, որ այդ տարվա ցորենի սերմերի վերադարձը հետաձգվել է 1 տարով, այսինքն 2015թ-ի աշնանը ստիպված են լինելու վերադարձնել 2 տարվա ցորենի սերմ:

Կարկտահարությունից հետո Փանիկ համայնքում կառուցվել է 2 հակակարկտակայան:

Գյուղատնտեսության ապահովագրման համակարգի ներդրմանը կարող է նպաստել այն հանգամանքը, որ առևտրային բանկերը գյուղատնտեսությանը սուբսիդավորված վարկերը սկսեն տրամադրել ավելի ցածր տոկոսադրույքով, իսկ պետությունն էլ իր հերթին մեծացնի այդ վարկերի սուբսիդավորման մասնաբաժինը այն գյուղացիական տնտեսությունների համար, ովքեր կունենան համապատասխան հողակտորի կամ անասնազլխաքանակի համար կնքված ապահովագրական պայմանագիր: Սա կարելի է ասել բխում է բոլորի շահերից. գյուղացին առանց լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ ծախսելու կապահովագրի իր բերքը և անասունը (այն գումարը, որ նախկինում տալիս էր որպես վարկի տոկոսադրույք, հիմա կտա որպես ապահովագրավճար և արդյունքում կունենա ապահովագրություն), իսկ բանկերն էլ ձիշտ է ցածր տոկոսներով վարկեր կտան, սակայն դրա փոխարեն զգալի կնվազեցնեն բերքի կորստի պատճառով վարկի չսպասարկման և չվերադարձման ռիսկերը, ինչպես նաև կապահովեն լավ միջավայր, որ նույն գյուղացին տվյալ վարկը մարելուց հետո նորը վերցնի և ընդլայնի իր գործունեությունը և ոչ թե վարկը մարել չկարողանալու պատճառով լքի

«Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն»

երկիրը: Օրինակ՝ Շիրակի մարզի այս տարվա աննախադեպ կարկտահարության պարագայում, եթե գործեր ապահովագրական համակարգը, ապա բանկերը չէին հետաձգի գյուղացիների ունեցած գյուղատնտեսական վարկերի մարման ժամկետները, իսկ գյուղացու համար էլ չէր մեծանա հաջորդ տարվա պարտքային բեռը:

Աշխատանքային միգրացիա

Շիրակի մարզը արտագնա աշխատանքի մեկնողների թվով Հանրապետությունում առաջիններից է, քանի որ մարզում աշխատատեղերը քիչ են և մարդիկ ստիպված են գնում ՌԴ աշխատելու: Ըստ մեր հարցումների այս տարվա սկզբին, համեմատած անցած տարվա նույն ժամանակահատվածի հետ, գյուղերում արտագնա աշխատանքի մեկնողների թիվը փոքր է եղել, դա պայմանավորված էր ՌԴ-ի միգրացիոն օրենքների փոփոխությունների հետ: Շատ քաղաքացիներ վախենում էին ծախս անել, տոմս գնել ու հանկարծ ճանապարհից հետ ուղարկվել, դրա համար էլ սպասեցին նոր օրենսդրական փոփոխությունների: Գյուղեր մեր այցերի ժամանակ ասվել է, որ տարվա սկզբին գյուղից ՌԴ արտագնա աշխատանքի մեկնողներ եղել են, սակայն մի երկուսին հետ են ուղարկել՝ չեն թույլատրել մուտք գործել ՌԴ, այնուամենայնիվ տարվա ընթացքում արտագնա աշխատանքի մեկնողների թվաքանակը նորից ավելացել է և առնվազն հավասարվել 2013թ-ի մակարդակին: Գյուղերում տնային տնտեսությունների 70- 90%-ից մեկնում են ՌԴ աշխատելու, տուն կա, որ երկու հոգի են մեկնում: Գյուղերում մարդիկ ռիսկային են համարում գյուղատնտեսությամբ զբաղվելը և հիմնականում փոքր տնտեսություն ունեցողների համար գյուղատնտեսությունը եկամտաբեր չէ՝ ապրուստի միջոց չէ: Գյուղերում երիտասարդները ավելի շատ են ձգտում գնալ արտագնա աշխատանքի, քան տարեցները: Շատ ընտանիքներում նոր անձինք էին մեկնել արտագնա աշխատանքի, ովքեր նախկինում չէին գնացել, առաջին անգամն էր և վստահ են, որ իրենց հետ չեն ուղարկի:

Շիրակի մարզի քաղաքներում պատկերը նորից նույնն է և ինչ-որ տեղ ավելի վատթար, քանի որ գյուղերում գյուղացին թեկուզ տնամերձը մշակելով ապահովում է իր ընտանիքի այդ տարվա համար անհրաժեշտ կարտոֆիլը, բանջարեղենը և այլն, իսկ քաղաքացին այդ հնարավորությունից զրկված է և աշխատատեղերի բացակայության կամ շատ ցածր վարձատրության պատճառով անհնարին է համարում ապրուստի միջոց վաստակելը այստեղ:

Այս արգելքներից խուսափելու համար ՀՀ քաղաքացիները հասնում են ՌԴ և ձեռնամուխ լինում ՌԴ քաղաքացիություն ստանալու համար: Ձեռնարկություններ այցերի ժամանակ բոլորը դժգոհում էին ներքին պահանջարկի նվազման տենդենցից:

Արդյունաբերություն և Շիրակի մարզի տնտեսության այլ ոլորտներ

1. Թեթև արդյունաբերություն՝ գուլպա, զուգագուլպա, տրիկոտաժեղեն(ներքնագգեստ, արտահագուստ, սպիտակեղեն), կոշիկեղեն և մանածագործական արտադրություն

Գյումրի քաղաքում գործում է ՀՀ-ում զուգագուլպա արտադրող ամենախոշոր ընկերությունը՝ Լենտեքս ՍՊԸ-ն, որը բացի զուգագուլպայից արտադրում է նաև գուլպա, կիսագուլպա և 2013թ-ից նաև տրիկոտաժեղեն՝ մեծամասամբ ներքնաշորեր:

«Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն»

Ընկերությունը վերջին մի քանի տարիներին ունեցել է թողարկման ծավալների կայուն մոտ 30%-անոց աճ՝ հիմնականում պայմանավորված ներքին շուկայում վաճառքի ծավալների ավելացմամբ, սակայն 2014թ-ին թողարկման ծավալները չեն աճել, մնացել են նույն 2013թ-ի մակարդակին: Ընկերությունը արտադրանք է արտահանում ԱՄԷ՝ Դուբայ քաղաք, Ֆրանսիա, Վրաստան: Արտահանումը կազմում է ընդհանուր թողարկման 2-3%-ը:

Իսկ ընդհանուր ոլորտում, մասնավորապես տրիկոտաժեղենի մասով այս տարի կա որոշակի աճ՝ պայմանավորված ներքին շուկայում վաճառքների ավելացմամբ, ինչն էլ իր հերթին պայմանավորված է ներկրվող անորակ և էժանագին ապրանքատեսականու փոքր-ինչ դուրսմղմամբ:

Տրիկոտաժի արտադրության համար նախատեսված հումքը ունի թուրքական ծագում, ինչը ռիսկեր է պարունակում հետագայում ՄՄ-յան պարագայում հումքի գների թանկացման, իսկ գուլպայի, գուգագուլպայի հումքը նույնպես ներկրվում է ոչ ՄՄ-յան երկրներից, մասնավորապես՝ Չինաստանից, Հարավային Կորեայից և այլն:

Գյուճիկում գործում է տրիկոտաժեղենի՝ մասնավորապես որակյալ ներքնաշորերի արտադրությամբ զբաղվող Գևորգ և Վահան ՍՊԸ-ն, որի արտադրանքի զգալի մասը, մոտ 90%-ից ավելին արտահանվում է Կանադա:

ՄՄ երկրներ արտահանման տեսանկյունից ՌԴ-ում զարգացած է գուլպայի արտադրությունը, իսկ Բելոռուսիայում՝ գուգագուլպայի արտադրությունը:

Կոշիկի արտադրության մասով հիմնական հումքը ներկրվում է Իտալիայից, իսկ ՌԴ շուկա դուրս գալու պոտենցիալ հնարավորությունները կան, ուղակի անհրաժեշտ են ֆինանսական միջոցներ արտադրանքի անհրաժեշտ ծավալ ապահովելու համար:

Մարալիկում գործող Նայթեքս ընկերությունը, որը աշխատում է նախկին բամբակամանվածքայինի շենքում և աշխատում է հիմնականում հայկական բանակի համար սրբիչների, ներքնաշորերի և նմանատիպ արտադրանքի արտադրությամբ ունի ֆինանսական դժվարություններ հումքի ձեռքբերումը կազմակերպելու համար:

Ընդհանուր ոլորտում առկա է որակյալ աշխատուժի և երիտասարդ կադրերի բացակայության խնդիր, քանի որ աշխատանքը դժվարին է և բավականին աշխատատար, ներկայումս քչերն են ցանկանում աշխատել ոլորտում, բացի այդ, չկան ոլորտի համար համապատասխան մասնագետներ պատրաստող ուսումնարաններ և կադրերի պատրաստման դժվարին գործը ստանձնել են հիմնականում գործատուները: Ոլորտին խոչընդոտում է նաև ՀՀ ներկրվող էժանագին և անորակ չինական և թուրքական ապրանքատեսականին, իսկ ազգաբնակչության ներկայիս ցածր գնողունակության պայմաններում շատերը նախընտրում են էժանը և անորակը:

2. Պանրագործություն, կաթնամթերքի արտադրություն

Մարզում կան 8-ից ավելի պանրագործությամբ զբաղվող ընկերություններ, որոնցից Իգիթ ՍՊԸ-ն զբաղվում է նաև կաթնամթերքի արտադրությամբ՝ թթվասեր, կաթնաշոռ, կաթ, պաղպաղակ և այլն: 2013թ-ից Ալեքսոլ ՍՊԸ-ն մտավ այս ոլորտ և սկսեց արտադրել պանիր, մածուկ և այլն:

Ոլորտի զարգացումը մեծ կախվածություն ունի վարկային ռեսուրսներից, քանի որ կաթի հիմնական մթերումը, այսինքն՝ կաթը գյուղացիներից մեծաքանակ գնվում է ամռան ամիսներին և այդ ժամանակահատվածում ընկերությունները ունենում են լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների կարիք, իսկ դրանց բացակայության դեպքում ունենում են լուրջ խնդիրներ:

«Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն»

Ոլորտի զարգացմանը խոչընդոտում է նաև այն հանգամանքը, որ գյուղացիներից գնված կաթի ԱԱՀ-ի վճարման բեռը ընկնում է տնտեսավարողների վրա(գյուղատնտեսական արտադրանքը ազատված է ԱԱՀ-ից) և արդյունքում ստացվում է արտադրանքի համար վաճառքի բարձր գին, ինչը խոչընդոտ է ներկայիս ցածր գնողունակության պայմաններում:

Շուկան սահմանափակ է, պանրագործները բազմաթիվ, իսկ զարգացման համար անհրաժեշտ է արտահանման կազմակերպում:

3. Գարեջրի արտադրություն, ածիկի արտադրություն

Գարեջրի արտադրությամբ մարզում զբաղվում է Գյումրի գարեջուր ՍՊԸ-ն, որը այս տարի նախորդ տարվա համեմատ ունեցել է թողարկման ծավալների աճ՝ պայմանավորված ներքին շուկայում վաճառքի ծավալների ավելացմամբ, որն էլ իր հերթին պայմանավորված է եղել շշի դիզայնի, արտաքին տեսքի, պիտակների փոփոխմամբ և արտադրանքի որակի բարձրացմամբ: Ընկերությունը ունի արտահանում, սակայն այն կազմում է ընդհանուր թողարկման շատ փոքր մասը, մոտ 1-3%, արտահանվում է դեպի ՌԴ: Քիչ է արտահանումը դեպի ՌԴ, որովհետև պահանջարկը դեռևս քիչ է, սակայն աշխատանքներ են տարվում արտահանումը շատացնելու, նոր շուկաներ մտնելու ուղղությամբ, մասնավորապես ԱՊՀ երկրներ:

Հիմնական հումքը ընկերությունը ներմուծում է՝ ածիկը Չեխիայից, իսկ գայլուկը Գերմանիայից: Հումքի սեփական արտադրություն սկսելը դժվար է, հատկապես գայլուկինը:

Գյումրիում Արմամաստ ՍՊԸ-ն կառուցում է գարեջրի ածիկի գործարան, որը պետք է ավարտված լիներ այս տարի, սակայն որոշակի դժվարությունների, այդ թվում ֆինանսական դժվարությունների պատճառով գործարանի շահագործումը հետաձգվել է առնվազն 1 տարի ժամկետով:

Նախատեսվում է գարեջրի համար ածիկ արտադրել, որը բացի նրանից, որ կբավարարի գարեջրի արտադրությամբ զբաղվող հայրենական ընկերությունների պահանջարկը, այլև կարտահանվի դրսի շուկաներ, մասնավորապես Եվրոպա:

Ապագա գործարանի համար նախատեսված սարքավորումները գրեթե ամբողջությամբ արդեն ներկրված են, դրանք չեխական և գերմանական արտադրության են: Ածիկ արտադրող ընկերությունը լինելու է տարածաշրջանում եզակին:

Ներկայումս ընկերությունը փոքր ծավալներով և հին սարքավորումներով գարի է ածիկացնում, իսկ գարին ներկրվում է, քանի որ տեղական գարին իր պարամետրերով չի համապատասխանում ածիկացման չափորոշիչներին: Փորձ է արվել գարու ներկրված սերմը աճեցնել այստեղ և բերքը օգտագործել ածիկացման համար, սակայն այն չի համապատասխանել: Այնուամենայնիվ այս տարի Եղվարդից գարի էր բերվել, որը բավարարել է ածիկացման համար նախատեսված չափանիշները՝ հավանաբար այն հատուկ ածիկի համար ներկրված գարու սերմից է աճեցվել Եղվարդում:

Ներկայումս Արմամաստը ՌԴ-ից, Ֆրանսիայից, Հոլանդիայից (մեծամասնությունը ՌԴ-ից) բերված գարուց ստանում է ածիկ, որը օգտագործվում է Երևանի գարեջրի գործարանի կողմից(Kilikia):

4. Շաքարավազի արտադրություն

«Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն»

Շաքարավազի արտադրությամբ Շիրակի մարզում և ամբողջ ՀՀ-ում զբաղվում է «Ալեքս-Գրիգ» ընկերությանը պատկանող Ախուրյանի շաքարի գործարանը: Վերջինս տարվա մեջ միջինում աշխատում է 3-4 ամիս:

Գործարանը ի սկզբանե ստեղծվեց այն նպատակադրումով, որ հումքը ապահովելու են Շիրակի մարզի և այլ մարզերի գյուղացիները, ովքեր գործարանի շահագործման պարագայում կցանկանան մշակել շաքարի ճակնդեղ: Սակայն բազում գյուղացիների հետ մեր գրույցից պարզել ենք, որ շաքարի ճակնդեղ մշակելը բավականին աշխատատար և տանջալից է, իսկ գործարանը 1կգ շաքարի ճակնդեղի դիմաց վճարելու է 40դրամ, ինչը գյուղացիների հաշվարկով կծածկի ծախսերը և չի ապահովի եկամուտ:

Ախուրյանի շաքարի գործարանը ներկայումս աշխատում է Հարավային Ամերիկայից, մասնավորապես՝ Բրազիլիայից ներկրվող կիսաֆաբրիկատների հիման վրա, ինչը որակապես զիջում է որպես հումք հանդիսացող շաքարի ճակնդեղին:

Այս տարի՝ 2014թ-ին, արտերկրից՝ Ուկրաինայից, մասնագետներ էին եկել Ախուրյանի շաքարի գործարան, ովքեր գործարանի կառուցման ժամանակ նույնպես հրավիրվել էին:

5. Շինարարական արտադրանքի, դպրոցական, օֆիսային գույքի, մետաղական կոնստրուկցիաների, խաղահրապարակների, մարզահրապարակների, զբոսայգու պարագաների արտադրություն: Շինարարական ընկերություններ

Մարզում զարգացման հեռանկար կարող է ունենալ նաև շինարարական արտադրանքի, մետաղական կոնստրուկցիաների, խաղահրապարակների արտադրությունը, քանի որ մարզում և մասնավորապես Գյումրիում, ինչու չէ նաև ՀՀ-ում, կառուցապատման կարիք դեռ շատ կա, իսկ Գյումրին ունի արհեստագործական մեծ ավանդույթներ:

Մարզում շինարարական արտադրանք արտադրող մեծ ընկերություն է «ՀԱՏՄ» ՍՊԸ-ն, որի 2014թ-ի մայիս ամսվա դրությամբ թողարկած կահույքի պարագաները 20-30%-ով աճել էին, իսկ շինարարական արտադրանքը նվազել էր 15-20%-ով՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի հետ համեմատ:

Ընկերությունը ներմուծումներ չի կատարում, սակայն ներքին շուկայի այլ ձեռնարկություններից գնում է իր արտադրանքների արտադրության համար անհրաժեշտ թուրքական արտադրության մետաղ և լամինատ: Մետաղը կազմում է ընդհանուր օգտագործվող հումքի 10%-ը, իսկ լամինատը՝ 20-25%-ը:

Մարզում մետաղական կոնստրուկցիաների և խաղահրապարակների արտադրությամբ զբաղվող խոշոր ընկերություն է «Մագնոն» ԲԲԸ-ն, որի մետաղական կոնստրուկցիաների թողարկման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ մնացել էին նույնը (մայիս ամսվա դրությամբ), իսկ խաղահրապարակների, մարզահրապարակների և դրանց պարագաների արտադրությունը՝ աճել էր 10-15%-ով, արևային ջրատաքացուցիչների վաճառքը՝ աճել էր 10%-ով (այդ ամենը մայիս ամսվա դրությամբ):

Ընկերությունը 2013թ-ից Չինաստանից սկսել է ներկրել պլաստիկից մասեր խաղահրապարակների կառուցման համար, ինչը կազմում է ընկերության կողմից օգտագործվող ընդհանուր հումք-նյութերի 15%-ը, իսկ արևային

«Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն»

ջրատաքացուցիչների մասերի 70%-ը ներկրվում է Չինաստանից, իսկ մնացած 30%-ը՝ Գերմանիայից:

Մարզում ընդհանուր առմամբ շինարարության ծավալները անցած տարվա համեմատ նվազել են, ոլորտում խոշոր նախագծեր չկան:

Գյումրիում գործող մեկ այլ ընկերություն՝ Ախուրյանի կոոպչին ՍՊԸ-ն, որը զբաղվում է կապիտալ շինարարությամբ, ճանապարհաշինությամբ և բնակարանաշինությամբ, մասնակցում է ամբողջ ՀՀ-ում հայտարարված պետական տենդերներին, այս տարի նախորդի համեմատ գործունեության ծավալները նվազել են 65%-ով, իսկ 2015թ-ի կանխատեսումները դրական են՝ հույս ունեն վերադառնալ 2013թ-ի իրենց ունեցած մակարդակին, այսինքն այս տարվա անկման չափ աճ կարծանագրեն 2015թ-ին: Իսկ ընկերության 2015թ-ի դրական սպասումները կապված են հայտարարված պետական տենդերների աճով:

Մարզի մեկ այլ շինարարական ընկերություն՝ Գոհարիկ ՍՊԸ-ն նույնպես այս տարի անկում է արձանագրել:

6. Տեղեկատվական տեխնոլոգիաներ

2014թ-ի սկզբից սկսեց գործել Գյումրու տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնը, որը ստեղծվել է Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի, ՀՀ կառավարության և Համաշխարհային բանկի կողմից:

Կենտրոնի գործունեության հիմնական ուղղությունները միտված են տեխնիկական և գործարար հմտությունների զարգացմանը, տեխնոլոգիական ձեռներեցության խթանմանը, տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտում նորարար գիտահետազոտական աշխատանքների առևտրայնացմանը, նոր տեխնոլոգիական ընկերությունների ձևավորմանը, արտասահմանյան ներդրումների ներգրավմանը:

Կենտրոնի առաքելությունն է Գյումրի քաղաքը վերածել տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների տարածաշրջանային և միջազգային կենտրոնի՝ ստեղծելով հնարավորությունների և ծառայությունների այնպիսի զարգացող միջավայր, որը կնպաստի աշխատատեղերի ստեղծմանը, կաջակցի տաղանդավոր երիտասարդներին և ընկերություններին կյանքի կոչել նորարար քիզնես գաղափարներ՝ նպաստելով տարածաշրջանի կայուն զարգացմանը:

7. Հրուշակագործություն, թխվածքեղենի արտադրություն

Գյումրիում 2013թի սկզբներից սկսել է գործել Նոր Անուշարան ՍՊԸ-ն, որը այս տարի նախորդի համեմատ արձանագրել է 30-40%-անոց աճ՝ պայմանավորված Շիրակի մարզի համայնքներում վաճառքի ծավալների ավելացմամբ: 2015թ-ին նախատեսում են ունենալ 2014թ-ի համեմատ 50%-անոց աճ, քանի որ պատրաստվում են մուտք գործել Երևանի, Վանաձորի և այլ խոշոր քաղաքների շուկաներ, ինչպես նաև 2 ֆիրմային խանութ բացել Գյումրիում, բացի այդ ուզում են զարկ տալ կոնֆետի արտադրությանը՝ ներկայումս վաճառում են միայն շուշա կոնֆետ, պատրաստվում են թողարկել ջեմով կոնֆետ, իսկ 2015թ-ից արդեն՝ իրիս և նուգա:

Գյումրիում կան նաև այլ հրուշակեղենի՝ տորթերի և թխվածքի արտադրությամբ զբաղվող ընկերություններ, օրինակ Արթ-Հեստել ՍՊԸ-ն, որը 2013թ-ին 2012թ-ի համեմատ թողարկման ծավալների 10% անկում էր ունեցել:

8. Քիմիական նյութերի ծուլում ու մշակում

Արթիկ Ստեկլոմաշ ԲԲԸ-ն մարզում միակ քիմական գործարանն է, այն գործում է ԽՍՀՄ տարիներից, աշխատում է 3 հերթափոխով: Ընկերության թողարկման ծավալները այս տարի նույնպես նվազել են՝ նախորդ տարվա համեմատ: Ոլորտի հիմնական խնդիրը արտադրանքի սպառումն է, իրացման շուկաներ դժվարությամբ են գտնում:

9. Սպասարկման ոլորտ՝ հյուրանոցներ, հանրային սնունդ

Գյումրիում հյուրանոցային գործունեությամբ զբաղվող Արաքս-95 ՍՊԸ-ի հյուրանոցում այս տարի արձանագրվել է 40%-ի նվազում, ինչը պայմանավորված է զբոսաշրջիկների թվի նվազմամբ, գիշերակացի օրերի նվազմամբ: Զբոսաշրջիկների թվաքանակի մեջ հատկապես նվազել են եվրոպական երկրներից ժամանած զբոսաշրջիկները, իսկ ՌԴ-ից ժամանած զբոսաշրջիկները շատացել են, սակայն վերջիններս փոքր տեսակարար կշիռ են կազմում ընկերության հյուրանոցում հյուրընկալվողների ընդհանուր թվաքանակի մեջ:

Գյումրի քոմերշլ սենթրի հյուրանոցում այս տարվա մայիս ամսվա դրությամբ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ հյուրանոցային գործունեությունը 10%-անոց աճ էր գրանցել:

Մարզի տուրիստական գրավչության վրա բացասական է ազդում համապատասխան ենթակառուցվածքների բացակայությունը, զվարճանքի վայրերի սակավությունը, ճանապարհների ոչ բարեկարգ լինելը:

Հավելվածներ

Մարզի տարբեր գյուղերի մասնագիտացման նկարագիրը ներկայացնող աղյուսակ. հավելված 1

գյուղ	տարածաշրջան	հողագործության մեջ հիմնականում մշակում են	անասնապահության մեջ հիմնականում պահում են
Հովունի	Ախուրյան	ցորեն, գարի, կարտոֆիլ, բազմամյա խոտ, իսկ տնամերձերում՝ բանջարեղեն	ոչխարաբուծություն, խոշոր եղջերավոր անասնապահություն, մեղվապահություն
Լանջիկ	Անի	ցորեն, գարի, կորնզան	ոչխարաբուծություն, խոշոր եղջերավոր անասնապահություն
Մանթաշ	Արթիկ	ցորեն, գարի, կարտոֆիլ, գազար	խոշոր եղջերավոր անասնապահություն, ոչխարաբուծություն
Թորոս-գյուղ	Աշոցք	ցորեն, գարի, վարսակ, կորնզան	խոշոր եղջերավոր անասնապահություն, ոչխարաբուծություն
Վահրամաբերդ	Ախուրյան	ցորեն, գարի, կարտոֆիլ, բանջարեղեն	խոշոր եղջերավոր անասնապահություն, ոչխարի, այծի բուծում, մեղվապահություն
Արևշատ	Արթիկ	գազար, կարտոֆիլ, ցորեն, գարի, սեղանի ճակնդեղ, կերային մշակաբույսեր՝ կորնզան, առվույտ	խոշոր եղջերավոր անասնապահություն
Ջրառատ	Ախուրյան	վարսակի խոտ, վարսակի սերմ, ցորեն, գարի, բազմամյա խոտ, կերային մշակաբույսեր՝ հիմնականում կորնզան	ոչխարաբուծություն, խոշոր եղջերավոր անասնապահություն
Բյուրակն	Ամասիա	ցորեն, գարի, կերային մշակաբույսեր	ոչխարաբուծություն, խոշոր եղջերավոր անասնապահություն
Գետք	Ախուրյան	ցորեն, գարի, կարտոֆիլ, բանջարեղեն	խոշոր եղջերավոր անասնապահություն, քիչ չափերով խոզերի, ոչխարի

«Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն»

			բուժում, մեղվապահություն
Մայիսյան	Ախուրյան	ցորեն, գարի, կարտոֆիլ, բանջարեղեն կերային մշակաբույսեր՝ առվույտ, կորնզան,	խոշոր եղջերավոր անասնապահություն, մեղվապահություն, ոչխարաբուծություն
Նոր կյանք	Արթիկ	ցորեն, գարի, կերային մշակաբույսեր, կարտոֆիլ	խոշոր եղջերավոր անասնապահություն, ոչխարաբուծություն
Փանիկ	Արթիկ	ցորեն, գարի, կերային մշակաբույսեր՝ հիմնականում կորնզան	խոշոր եղջերավոր անասնապահություն, քիչ չափով մեղվապահություն, խոզի բուծում
Գուսանագյուղ	Անի	ցորեն, գարի, կորնզան	ոչխարաբուծություն, խոշոր եղջերավոր անասնապահություն, մեղվապահություն
Լուսակերտ	Արթիկ	ցորեն, գարի, քիչ չափով էլ կարտոֆիլ	խոշոր եղջերավոր անասնապահություն
Հացիկ	Ախուրյան	ցորեն, գարի, կարտոֆիլ, կերային մշակաբույսեր՝ հիմնականում առվույտ	խոշոր եղջերավոր անասնապահություն, քիչ չքվերով խոզի, ոչխարի բուծում, մեղվապահություն
Սարատակ	Արթիկ	գարի, ցորեն, կարտոֆիլ, կերային մշակաբույսեր հիմնականում կորնզան	խոշոր եղջերավոր անասնապահություն
Ագատան	Ախուրյան	ցորեն, գարի, կարտոֆիլ, կերային մշակաբույսեր, կաղամբ, գլուխ սոխ և այլ բանջարեղեն	խոշոր եղջերավոր անասնապահություն
Ախուրյան	Ախուրյան	ցորեն, գարի, կարտոֆիլ, կերային մշակաբույսեր՝ հիմնականում առվույտ և տարբեր բանջարեղեն	խոշոր եղջերավոր անասնապահություն, քիչ չափով մեղվապահություն, խոզի բուծում
Ղարիբջանյան	Ախուրյան	գարի, ցորեն, ծաղկակաղամբ, կարտոֆիլ, կաղամբ	խոշոր եղջերավոր անասնապահություն, քիչ չափով խոզի բուծում
Սառնաղբյուր	Անի	ցորեն, գարի, կերային մշակաբույսեր, բանջարեղեն տնամերձերում	խոշոր եղջերավոր անասնապահություն, ոչխարաբուծություն, քիչ չափով էլ մեղվապահություն
Ամասիա	Ամասիա	կերային մշակաբույսեր, բազմամյա խոտ, հացահատիկ	խոշոր եղջերավոր անասնապահություն, ոչխարաբուծություն
Աշոցք	Աշոցք	կերային մշակաբույսեր, բազմամյա խոտ, հացահատիկ	խոշոր եղջերավոր անասնապահություն, մասամբ ոչխարաբուծություն
Պենզաշեն	Արթիկ	կերային մշակաբույսեր, բազմամյա խոտ, հացահատիկ	խոշոր եղջերավոր անասնապահություն

«Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն»

Արևիկ	Ախուրյան	ցորեն, գարի, կարտոֆիլ, կերային մշակաբույսեր, կաղամբ և այլ բանջարեղեն	խոշոր եղջերավոր անասնապահություն
Անուշավան	Արթիկ	կերային մշակաբույսեր, բազմամյա խոտ, հացահատիկ	խոշոր եղջերավոր անասնապահություն
Երազգավորս	Ախուրյան	ցորեն, գարի, բազմամյա խոտաբույսեր	խոշոր եղջերավոր անասնապահություն, խոզաբուծություն, կենտրոնացված խոզի բուծում
Բենիամին	Ախուրյան	ցորեն, գարի, կարտոֆիլ, կերային մշակաբույսեր, բանջարեղեն	խոշոր եղջերավոր անասնապահություն, քիչ չափով խոզի բուծում, կենտրոնացված ոչխարաբուծություն
Գեղանիստ	Արթիկ	ցորեն, գարի, բազմամյա խոտ	խոշոր եղջերավոր անասնապահություն
Այգաբաց	Ախուրյան	ցորեն, գարի, մասամբ կարտոֆիլ, կերային մշակաբույսեր	խոշոր ու մանր եղջերավոր անասնապահություն
Կառնուտ	Ախուրյան	ցորեն, գարի, կարտոֆիլ, կերային մշակաբույսեր, կաղամբ և այլ բանջարեղեն	խոշոր եղջերավոր անասնապահություն, քիչ չափով խոզի բուծում, կենտրոնացված ոչխարաբուծություն
Առափի	Ախուրյան	ցորեն, գարի, կարտոֆիլ, կերային մշակաբույսեր	խոշոր եղջերավոր անասնապահություն, քիչ չափով խոզի բուծում, ոչխարաբուծություն
Հոռոմ	Արթիկ	ցորեն, գարի, կարտոֆիլ, կերային մշակաբույսեր,	խոշոր եղջերավոր անասնապահություն.